ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունիսի 2024 թվականի № 262-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐՈՒՄ ՏՆՕՐԻՆՎՈՂ ԳԱՂՏՆԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական գաղտնիքի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով, 10-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ մասերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի N 53-Ն որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի համայնքապետարանների աշխատակազմերում տնօրինվող գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՄԱՀԱԿՅԱՆ

2024 թվականի հունիսի 24
ք. Հրազդան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2024 թվականի հունիսի 24-ի № 262-Ա որոշման

ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՑԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐՈՒՄ ՏՆՕՐԻՆՎՈՂ ԳԱՂՏՆԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N/N Հ/Հ	Գաղտնագրման ենթակա տեղեկության անվանումը	Գաղտնիության աստիճանը
	1. ՌԱԶՄԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
1	Զինված ուժերի և այլ զորքերի ռազմավարական, օպերատիվ և մարտավարական բնույթի պլանների և ծրագրերի, ըստ ռազմական գործողությունների ձևերի զորքերի, ներառյալ աշխարհազորի և տարածքային պաշտպանության վերաբերյալ տեղեկությունները - մարզի մասշտաբով - նույն տեղեկությունները՝ համայնքների մասշտաբով	ԳԱՂՏՆԻ
2	Զինված ուժերի, այլ զորքերի և քաղաքացիական պաշտպանության ուժերի զորահավաքի ծավալման, մարդկային և տրանսպորտային ռեսուրսների զորահավաքի անցկացման, զորահավաքի ծավալումը կառավարելու համակարգի և անձնակազմով համալրելու հնարավորությունների մասին, սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով և այլ նյութական, ֆինանսական միջոցներով, ինչպես նաև ռազմական փոխադրումներով ապահովելուն վերաբերող տեղեկությունները - մարզի մասշտաբով - նույն տեղեկությունները՝ համայնքների մասշտաբով	ԳԱՂՏՆԻ
3	Զինված ուժերի, այլ զորքերի, քաղաքացիական պաշտպանության ուժերի տեղաբաշխումը, իրական անվանումները, կազմակերպչական կառուցվածքը, սպառազինությունը, ապահովման և մարտունակության վիճակը, անձնակազմի, տրանսպորտային միջոցների, տեխնիկական այլ միջոցների, նյութական միջոցների (վառելիքաքսուկային և այլ միջոցներ) թվաքանակը բացահայտող տեղեկությունները, բացառությամբ, երբ նշված տեղեկությունները ենթակա են հրապարակման՝ ՀՀ միջազգային պարտավորությունների համաձայն - մարզի մասշտաբով - նույն տեղեկությունները՝ համայնքների մասշտաբով	ԳԱՂՏՆԻ
4	Հատուկ պահպանվող և մուտքի ու ելքի հատուկ կարգ ունեցող օբյեկտների տեղաբաշխման, նշանակության, պաշտպանվածության ու պատրաստականության աստիճանի, դրանց նախագծման և շինարարության, ինչպես նաև այդ օբյեկտների համար տարածքներ հատկացնելու մասին տեղեկությունները - մարզի մասշտաբով - նույն տեղեկությունները՝ համայնքների մասշտաբով	ԳԱՂՏՆԻ

5	Ռազմական դրության ժամանակ բնակչության պաշտպանվածության աստիճանի մասին տեղեկությունները - մարզի մասշտաբով - նույն տեղեկությունները՝ համայնքների մասշտաբով	ԳԱՂՏՆԻ
2. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
6	Հայաստանի Հանրապետությունը հնարավոր զինված հարձակումներից պաշտպանելու վերաբերյալ նախապատրաստական ծրագրերի բովանդակության, ռազմամթերքի և ռազմական տեխնիկայի արտադրության, նորոգման գծով արդյունաբերական մոբիլիզացիոն կարողությունների, ռազմական հումքի ու նյութերի պահեստավորման և մատակարարումների ծավալի, նյութական՝ պետական, զորահավաքային և ռազմավարական պահուստների կառուցվածքի, փաստացի չափի և դրանց տեղաբաշխման մասին տեղեկությունները - մարզի մասշտաբով	ԳԱՂՏՆԻ
7	Քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների, վարչական շենքերի պաշտպանվածության ու բնակչության անվտանգության ապահովվածության աստիճանի, տարահանման երթուղիների և տեղաբաշխման վայրերի ու դրանց հնարավորությունների մասին տեղեկությունները - մարզի մասշտաբով - նույն տեղեկությունները՝ համայնքների մասշտաբով	ԳԱՂՏՆԻ
8	Քաղաքացիական պաշտպանության պլանների մասին տեղեկությունները - մարզի մասշտաբով - նույն տեղեկությունները՝ համայնքների մասշտաբով	ԳԱՂՏՆԻ
9	Հայաստանի Հանրապետության պետական, զորահավաքային, ռազմավարական պաշարների պահուստի, դրա ֆինանսների և բյուջետային քաղաքականության (բացի տնտեսության և ֆինանսների ընդհանուր վիճակը բնութագրող ամփոփ ցուցանիշներից) մասին տեղեկությունները - մարզի մասշտաբով	ԳԱՂՏՆԻ
10	Տնտեսության զորահավաքային ծրագրերի և պլանների մասին տեղեկությունները - մարզի մասշտաբով - նույն տեղեկությունները՝ համայնքների մասշտաբով	ԳԱՂՏՆԻ
11	Ընդհանուր օգտագործման, ռազմավարական նշանակության հումքերի, նյութերի, դրանց ստեղծման, արտադրության և զարգացման, զորահավաքային հզորությունների վերաբերյալ տեղեկությունները - մարզի մասշտաբով - նույն տեղեկությունները՝ համայնքների մասշտաբով	ԳԱՂՏՆԻ
12	Տրանսպորտային միջոցների զորահավաքային պահանջարկը, այդ թվում՝ տրանսպորտի առանձին տեսակների և դրանցով զորահավաքային ապահովվածությունը բացահայտող տեղեկությունները - մարզի մասշտաբով	ԳԱՂՏՆԻ